

Տաթևիկ Մանուկյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
Մեսրոպ Մաշտոցի անվան Մալրենադարան
tatevm0505@gmail.com

Քնար Հարությունյան

Մեսրոպ Մաշտոցի անվան Մալրենադարան
knarbanaser@gmail.com

Էլեն Դավթյան

Հայաստանի պատմության թանգարան
davtyanelen2000@gmail.com

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԸ. ՕՆԼԻԿ ԵԳԱՆՅԱՆԻ ՄԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ^{1*}

Հիմնաբառեր. Հայերեն ձեռագիր, ձեռագրերի անձնական հավաքածուներ, ՀՊԹ, ձեռագրական քննություն, հայերեն ձեռագրերի պատառիկներ, հիշատակարան, 17–19-րդ դարեր

Մուտք

Հայերենով ավանդված 25000–30000 ձեռագրական ժառանգությունը տեղաբաշխված է Հայաստանում և Հայաստանից դուրս գտնվող խոշոր ձեռագրական կենտրոններում (Երևանի Մատենադարան, Վենետիկի, Վիեննայի Մխիթարյան միաբանություններ, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանք և այլն), գիտամշակութային տարբեր հաստատություններում (գրադարաններ, թանգարաններ, արխիվներ և այլն) և անհատների անձնական հավաքածուներում:

Գիտության համար հավասարապես կարևոր են ինչպես խոշոր հավաքածուների, այնպես էլ տարբեր հաստատությունների և անհատների մոտ պահվող գեթ մեկ ձեռագրի ուսումնասիրությունն ու հանրայնացումը: Այդ կարևորությամբ պայմանավորված էլ 19-րդ դարից սկսվել է հայերեն ձեռագրերի նկարագրություն-ուսումնասիրությունները և դրանք ձեռագրացուցակներով ու հոդվածներով հրատարակելը (Coulie 2020): Որքան էլ ուսումնասիրողները փորձել են ուշադրության կենտրոնում պահել նաև անձնական և փոքր հավաքածուները, այսօր էլ՝ 21-րդ դարի 2-րդ տասնամյակում, գտնվում են գիտության համար անհայտ կամ մոռացված նորանոր ձեռագրեր: Նրանց քննությունն ու գիտական շրջանառությունը խիստ կարևոր են հայերեն ձեռագրական միավորները արձանագրելու, դրանց պատմությունը վերհանելու և եղած նյութերը նոր փաստերով համալրելու համար:

* Ստացվել է 06.08.2025թ., ուղարկվել է գրախոսության՝ 23.08.2025թ., ընդունվել է տպագրության՝ 09.12.2025թ.:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 21T-6A277 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

Սույն հոդվածը նման փոքրաքանակ, մասամբ անհայտ ձեռագրերի մասին է, որոնք կես դարից ավելի պահվում են Հայաստանի պատմության թանգարանում:

Ե՞րբ և որտեղի՞ց են ստացվել ՀՊԹ-ի հայերեն ձեռագրերը

ՀՊԹ-ում պահվող հայերեն ձեռագրերի մասին մինչ այժմ մեզ հայտնի միակ տպագիր աղբյուրը Օսնիկ Եգանյանի «Ցուցակ հայերեն ձեռագրաց ՀՍՍՀ Պետական պատմական թանգարանի» հրատարակումն է՝ տպագրված 1984թ. «Բանբեր Մատենադարանի» հանդեսի 14-րդ համարում (Եգանյան 1984, 251–275)², որտեղ համառոտ նախաբանով Օսնիկ Եգանյանը բերում է այդ ձեռագրերի՝ իր արած նկարագրությունները³:

Ըստ այդ համառոտ նախաբանի՝ ձեռագրերը «...30-ական թվականներից ի վեր գտնվում են թանգարանի ֆոնդերում» և պահվել են «թանգարանի գրքային ֆոնդում, բազմաթիվ գրքերի հետ...» (Եգանյան 1984, 251):

Նրա տեսած և նկարագրած ձեռագրերը հետևյալներն են՝

հ^մ 692 Ավետարան – ԺԵ. դար

հ^մ 592 Տոնացույց – 1734թ.

հ^մ 741 Ժողովածու – ԺԸ. դար

հ^մ 693 Բառգիրք – 1850թ.

Հնատիպ գրքի վերանորոգության 1675թ. Հիշատակարան հ^մ 438:

2023թ. թույլտվություն ստացանք աշխատելու ՀՊԹ-ի հնատիպ գրքերի ֆոնդում⁴: Ամիսներ տևած ստուգումների ու ճշտումների արդյունքում պարզեցինք, որ այնտեղ՝ հնատիպ և ոչ հնատիպ գրքերի շարքում, հերթական համարակալմամբ պահվում են ոչ միայն Օ. Եգանյանի տեսած և նկարագրած ձեռագրերը, այլև ընդհանուր առմամբ 52 հայերեն ձեռագրական միավոր, որոնցից 26-ը ամբողջական ձեռագիր, 25-ը պատռոցիկ⁵ և 1-ը շրջաբերական նամակ: Բացի այս առանձին միավորներից՝ ֆոնդի որոշ գրքերում իբրև պահպանակներ ու կազմաստաներ գործածված են տարբեր ձեռագրերի թերթեր⁶:

² Օսնիկ Եգանյանի այս հոդվածը ՀՊԹ-ի ձեռագրերի համար միակ աղբյուր է համարված նաև Բեռնար Կուլիի գրքում, որտեղ ի մի են բերված մինչ օրս հայտնի բոլոր հայերեն ձեռագրերն ու հավաքածուները՝ համապատասխան ձեռագրացուցակներով և այլ աղբյուրներով (Coulie 2020, 387–388):

³ ՀՊԹ-ի «Համար 1 ազգագրական ֆոնդում» պահվում են նաև 6 հայերեն ձեռագիր հմայի, որոնց անդրադարձել է Մատենադարանի մեր գործընկեր արվ. գ.թ. Դավիթ Ղազարյանն իր «Պահպանության գրքերի («Հնայիների») գեղարվեստական հարդարանքը (15-րդ դարից մինչև 1659 թվական)» ատենախոսության մեջ և 2 հոդվածներում (Ղազարյան 2012, Ղազարյան 2013):

⁴ Ուսումնասիրությունը կատարելու թույլտվության, աշխատանքային բոլոր հարցերում լիակատար աջակցության և համագործակցության համար շնորհակալ ենք ՀՊԹ-ի տնօրենությանը՝ տնօրեն մ. գ.թ., դոցենտ Դավիթ Պողոսյանին, փոխտնօրեն պ. գ.թ. Նժդեհ Երանյանին, գլխավոր ֆոնդապահ Սոնա Հովսեփյանին:

⁵ Նկատենք, որ յուրաքանչյուր համարի ներքո գրանցված պատռոցիկ կարող է բաղկացած լինել մեկից ավելի թերթերից:

⁶ Հոդվածի թույլատրելի ծավալը չգերազանցելու համար սրանց վերաբերյալ տեղեկությունները բերում ենք Հավելված 2-ով:

ՀՊԹ-ում ձեռագրերի հայտնվելու մասին Օ. Եգանյանի հողվածը որևէ տեղեկություն չի հաղորդում, միայն նշված է, որ դրանք թանգարանում են գտնվում 30-ական թթ.-ից: Հայտնի է, որ ՀՊԹ-ում⁷ հայերեն ձեռագրեր են հավաքվել հիմնադրումից քիչ անց՝ 1921 թ.-ից սկսած: 1935 թ., երբ Հայաստանի պետական կուլտուրապատմական թանգարանը բաժանվում է երեք ինքնուրույն թանգարանների, գրական ու ձեռագրական հավաքածուն անցնում է Գրական թանգարանին: 1938 թ. սեպտեմբերին այդ բավականին հարուստ և արժեքավոր հավաքածուն (1357 ձեռագիր)⁸ ՀՄԽՀ Լուսժողկոմատի որոշմամբ հանձնվում է Մատենադարանին (Եգանյան 1965, 147–148):

ՀՊԹ-ում ներկայումս եղած ձեռագրերի՝ թանգարան մուտք գործելու մասին նշումներ կան թանգարանի Գլխավոր մատյանում⁹. դրանք հայտնում են միայն ձեռագրերի՝ թանգարանում հայտնվելու ժամանակը և որոշ դեպքերում դրանք թանգարանին հանձնած կամ վաճառած մարդկանց անունները:

Այդ տեղեկությունների համաձայն՝ թանգարանը ձեռագրերը ստացել է հետևյալ տարիներին նշված անձանցից՝

ա. 1921 թ.-ից սկսած – 4 ձեռագիր (հ^մ 692, 693, 741, 748) և 1 շրջաբերական-նամակ (հ^մ 352): Ձեռագիրը հանձնած մարդկանց անուններն անհայտ են, կա միայն «ստացված տարբեր մարդկանցից» նշումը:

բ. 1944 թ. – 7 ձեռագիր (հ^մ 1140, 1141, 1143–1145, 1148, 1150)՝ ստացված Յուրա (կամ Յուտա) Նիկոլինայից¹⁰:

գ. 1958 թ. – 1 ձեռագիր (հ^մ 1146), գնվել է Հայկանուշ Փիլիպոսյանից:

դ. 1959 թ. – 1 ձեռագիր (հ^մ 1142), գնվել է Գրիգոր Գևորգի Կազալիցկուց:

ե. 1972 թ. – գրանցվել են հ^մ 1158–1180, 1185, 1186 պատահիկները և հ^մ 1017, 1182–1183, 1184, 1187–1194 ձեռագրերը՝ առանց որևէ այլ տեղեկության:

Գլխավոր մատյանում տեղեկություն չկա հ^մ 1147 ձեռագրի վերաբերյալ, սակայն ձեռագրի վրա եղած նշումի համաձայն այն գնվել է ոմն Մարտիրոս Միսակյանից:

Փաստորեն, Օննիկ Եգանյանին 1980-ականների հայտնի և հասանելի են եղել միայն 1921 թվականից թանգարան մուտք գործած ձեռագրերը՝ բացի 748 համարի Խորհրդատետրից: Այն հանգամանքը, որ 1921 թ.-ից թանգարանի ստացած

⁷ Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում թանգարանն ունեցել է հետևյալ անվանումները՝ Հայաստանի Պետական կենտրոնական (1922 թ.), Կուլտուր-պատմական (1931 թ.), Պատմական (1935 թ.) (Առաքելություն և պատմություն):

⁸ Այս հավաքածուն գրականության մեջ հայտնի է «Կուլտուր-պատմական թանգարանի հավաքածու» կամ «Գրական թանգարանի հավաքածու» անվանումներով: Այն կազմված է Նոր Նախիջևանի, Նոր Բայազետի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, Կարինի Սանասարյան վարժարանի, Թիֆլիսի Հայոց Ազգագրական ընկերության, Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու, Երևանի Ալ. Մյասնիկյանի անվ. Հանրային գրադարանի, նաև անհատների՝ Հովհ. Թումանյանի, Կարապետ Կոստանյանի, Երվանդ Շահագիզի, Ստեփան Կանայանի և այլ անձանց ձեռագրերից (Եգանյան 1965, 147–165):

⁹ Գլխավոր մատյանում եղած տեղեկությունները մեզ է փոխանցել գլխավոր ֆոնդապահ Սոնա Հովսեփյանը, որի համար ևս մեկ անգամ հայտնում ենք մեր շնորհակալությունը:

¹⁰ Նա է թանգարանին հանձնել նաև հ^մ 1149 արաբատառ ձեռագիրը, որն ըստ թանգարանի ցանկերի՝ պարունակում է Հաֆեզի բանաստեղծությունները:

ձեռագրերը չեն միացել ընդհանուր հավաքածուին և 1938 թ. չեն փոխանցվել Մատենադարանին, ենթադրել է տալիս, որ ամենայն հավանականությամբ ձեռագրերը թանգարան են եկել այլ գրքերի ու առարկաների հետ, որոշ ժամանակ գուցե պահվել են առանձին: Հնարավոր է նաև, որ գրանցման պահին չի կարևորվել նրանց ձեռագիր լինելու փաստը, ուստի և առանց առանձնացման տեղադրվել են գրքերի հետ մի շարքում:

Գլխավոր մատյանի սուղ տեղեկությունները վկայում են, որ ՀՊԹ-ն ոչ միայն ստացել, այլև գնել է ձեռագիր մատյաններ (եղած տվյալներով՝ գնումները եղել են 1958 և 1959 թթ-ին՝ Կարո Ղաֆադարյանի տնօրինության տարիներին): Հավանական ենք համարում նաև, որ ձեռագրերի նվիրատուները կամ վաճառողները ձեռագրերի հետ թանգարանին հանձնած կամ վաճառած լինեն նաև այլ իրեր:

Ի՞նչ ձեռագրեր են պահվում ՀՊԹ-ում. ընդհանուր բնութագիր

Ինչպես արդեն նշել ենք, ՀՊԹ-ում պահվող բոլոր ձեռագրերը, բացի հմայիլներից, գտնվում են հնատիպ գրքերի ֆոնդում գրքերի հետ հերթական համարակալմամբ: Ձեռագրերը թերթակալված չեն՝ բացի Օ. Եգանյանի նկարագրածներից (ըստ ամենայնի դրանք հենց Օ. Եգանյանն էլ թերթակալել է)¹¹, սակայն որոշ ձեռագրեր ունեն գրչի կամ հետագայի էջակալումներ (երբեմն վրիպակներով): Ձեռագրերի մի մասը մեր աշխատանքի ընթացքում թերթակալել ենք՝ հետագա ուսումնասիրությունները հնարավոր դարձնելու համար, մյուսների պարագայում, եթե հնարավոր է եղել, կիրառել ենք եղած էջակալումը:

Ձեռագրերից հնագույնը 15-րդ դարի Ավետարանն է (հ^մ 692), որը տեսել և նկարագրել է Օ. Եգանյանը (Եգանյան 1984, 251–253): Մյուսներն ավելի նոր ժամանակների՝ 18–19-րդ դարերի տարբեր բովանդակության մատյաններ են (Խորհրդատետր, Երգարան, Աղոթարան, Ռամգիրք, Ախտարք, փիլիսոփայություն, կրոնագիտություն, հմայություններ ու գուշակություններ և այլն): Մատյանների մի մասն ունի գրչության ժամանակի և հետագայի հիշատակարաններ, որոնցից հայտնի են դառնում ձեռագրի գրչության և անցած ուղու հետ կապված տարբեր մանրամասներ:

Հայտնի են 6 ձեռագրի գրչության վայր՝ Մոկք, Կարս, Նովրուզլու գյուղ¹², Անգալի (Պարսկաստան), Կարին, Ախալցխա, 10-ի գրչի և 14-ի ստացողի անուններ (տե՛ս Հավելված 1):

Բոլոր ձեռագրերի համար որպես գրանյութ օգտագործված է թուղթ: Կազմերը որպես կանոն ունեն ուշ շրջանի կազմերին բնորոշ առանձնահատկություններ: Իբրև կազմ սովորաբար ծառայում են թուղթը (ծաղկաթուղթը), լաթը կամ մոմլաթը, միջուկը սովորաթուղթ է կամ առհասարակ չկա, իսկ իբրև աստառ օգտա-

¹¹ Առաջին հայացքից թերթակալման տեխնիկական թվացող սովորական գործն իրականում «նրբություններ ունի, ուստի նաև մասնագիտական իմացություններ և աշխատանքային փորձ չունեցող որևէ մարդ չի կարող անել...» (ՏԷՐ-Վարդանեան 2014, 443):

¹² Տվյալների պակասով պայմանավորված՝ հնարավոր չեղավ հստակեցնել՝ Նովրուզլուն Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուրի, Շուշիի, Ջևանշիրի գավառի համանուն գյուղերից մեկն է, թե՛ Երևանի նահանգի Երևանի գավառինը (Հակոբյան և այլք 1998):

գործված է թուղթ: Որոշ ձեռագրեր ունեն կտորե կրկնակագմեր (հ^մ 1189, 1190): Մատյանները հիմնականում մեծ չափերի և ծավալների չեն:

Ձեռագրերի մեծ մասն ունի թանգարանի կնքադրոշմ, որը մանուշակագույն թանաքով ուղղանկյուն է՝ «ԳՐԱԴԱՐԱՆ / ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՏՄԱԿԱՆ / ԹԱՆԳԱՐԱՆ» գրությամբ: Հ^մ 1147ը ունի նաև թանգարանի մեկ այլ կնքադրոշմ՝ մանուշակագույն թանաքով բոլորակ, որի մեջ եզրագծով «ՀՄԻՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ / ССРА Госуд. Исторический Музей Армении» գրությունն է: Հ^մ 1141 ձեռագրում կա ձեռագրի տիրոջ՝ Սերովբե վրդ. Քչուրյանի անձնական կնքադրոշմը՝ կապույտ թանաքով ձվածիր՝ «G. KETCHOURIAN PRETRE DU/// D'ERZEROUM» գրությամբ, հ^մ 352 շրջաբերականի վրա կա սև թանաքով ութանկյուն կնքադրոշմ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՄԱՐՏԻՐՈՍ / ՎԱՐԴԱՊԵՏ» (նկ. 1): Իսկ հ^մ 1143-ի տիտղոսաթերթին կա սև թանաքով ձվածիր, արաբատատ դժվարընթեռնելի մի կնքադրոշմ:

Ձեռագրերում կան գրադարանային նշումներ ու համարակալումներ, որոնք որպես կանոն արված են մատյանների՝ թանգարան մուտք գործելուց հետո:

Ձեռագրերի վիճակը բավարար է¹³. ձեռագրերը հիմնականում խոնավության կամ աղտոտվածության հետքերով են, երբեմն անկազմ կամ մաշված կազմով: Կան նաև ավելի լավ վիճակում գտնվող ձեռագրեր, սակայն բոլորն էլ կարիք ունեն նախնական մաքրման ու ախտահանման:

Ձեռագրերի քննություն

Ներկայացնենք ՀՊԹ-ի հայերեն ձեռագրերի հիմնական հատկանիշները, բովանդակված նյութերը, գրչության հանգամանքներն ու մեր կատարած քննությունները¹⁴:

Հ^մ 692 Ավետարանի (15-րդ դար, գրիչ, ծաղկող, ստացող՝ Մկրտիչ) Օ. Եզանյանի նկարագրությունը վերանայելիս որոշ ճշտումներ ենք արել, որոնցից առավել կարևորները, կարծում ենք, հետևյալներն են.

Ա. Պատառիկ-պահպանակների համար Օ. Եզանյանը նշում է՝ «մասն ինչ-որ ճառի» (Եզանյան 1984, 251): Մեզ հաջողվեց պարզել Ա, Բ պատառիկ-պահպանակների բովանդակությունը. այն հատված է Ազաթանգեղոսի «Պատմութիւն հայոց» երկից, որը կարող էր նաև առանձին կիրառված լինել իբրև ճառընտրի միավոր¹⁵:

¹³ Սա ձեռագրագիտական եզր է, որով բնորոշվում է մատյանի՝ ակնհայտ վատ վիճակին հակադրվող ցանկացած դրություն: Դա նշանակում է, որ բավարար են գնահատվում ինչպես լավ վիճակում գտնվող, այնպես էլ որոշակի նորոգման ու ախտահանման կարիք ունեցող ձեռագրերը:

¹⁴ Չկրկնելով Օ. Եզանյանի արած նկարագրությունները՝ այստեղ միայն նշում ենք նրա նկարագրած ձեռագրերը՝ ըստ հարկի ավելացնելով որոշ դիտարկումներ: Չենք քննում միայն հմր 592 Տոնացույցը, քանի որ այս դեպքում գործ ունենք տպագրի գրքի հետ, որի բացակա մասը լրացված է ձեռագրով, և հմր 438 հնատիպ գրքի վերանորոգության 1675 թ. հիշատակարանը:

¹⁵ Բերում ենք պատառիկների կարդալու հերթականությունը և նյութն ամբողջությամբ: Թեև Օ. Եզանյանը չի թվագրել պատառիկները, կարծում ենք՝ դրանք կարելի է թվագրել 10-11-րդ դարերով:

Պատառիկ-պահպանակների բովանդակությունը պետք է կարդալ հետևյալ հերթականությամբ՝ Բբ, Աա, Բբ, Աա, Բա, Աբ, Բա, Աբ՝

Բբ1 «յահի քում և պահեալ իցեն զհրամանս քո: Որ սարեցուցեր զՆոյ ի շորցն հեղեղեղէ, սարեցոյ զմեզ յան[օր]էնութեանց հեղեղէս [ո]ր շորջ զմեք պատեալս է: [Զ]ի թե զգազանս և զանաս[ո]նս սարեցուցեր ի փասպա[ն]ին յորչափ ևս ինայեացես ի քո պարկերս, որ զքեզ [փ]ստաւորեմք: Իսկ եթե ի [ս]ողոմնս և ի թոշոմնս ինայեցեր, յորչափ ևս ի մեզ իս[նայեցես] ///»,

Աա1 «/// [մ]եծամեծք [աազանոյ] որ եկեալ էին շքա[դիրք] պա[րի]ս առնել նմա և [երթալ ընդ] նմայ արքունիսն [զի փար]ցին զնա կնութեան [թագաւորին Տրդա] րայ և ///»,

Բբ2 «յանարժան հարսանեաց պղծութենէ: Զգոչիւ [բար]ձեալ մեծաձայն լալով [ճշե]ին և սսեին. Քաւ իցի ///, թե պարեցես զմեզ [մե]ծութիւնք և խոր[եաց]ես զմեզ փափկութիւնք /// հրապորեցես զմեզ [թա]գաւորութիւնք կամ [նե]ղեացես [զ]մեզ հալածանք կամ վրանգեցես զմե[զ] փանջանք հարուածոց, [թե]պետ և բիր սզգի [սզգի փանջիցեք] զմեզ ///»,

Աա2 «/// [զամ]ենահասարիչ, որ[ոյ] րերութիւնն յետութենէ հա[սրա]րեալ է. անփոփոխ են [ամե]նայն բարիքն և ոչ [անցա]նեն: Այդ ոչ բարձրութիւնք և ոչ խորութիւնք, ոչ վիշտք և՛ ոչ չարչարանք ///»,

Բա1 «/// [ոչ կեանք] և ոչ մահ ոչ կարէ [մեկ]նել զմեզ ի սիրոյն Քրիստոսի: [Զ]ի նմա նսիրեցաք զկոս[ութիւնս] մեր, զի նմա սանդե[ցիք] զարքութիւնս մեր, [զի] նմա մնամք և սիրոյ [նոր]ս ցանկացեալ ենք և [սպա]սեմք մինչև կացոք ա[ռաջ]ի փառաց գովութեա[ն] նորա առանց ամալթոյ պարկառանաց:

Եւ եղև որոյումն երկն[ի] սասարիկ անհնարին, զի»,

Աբ1 «/// յամենայն ճանա[պ]արիս ձեր և ածի ձեզ [պա]հեալս անարարութեամբ, հասուցի զձեզ մինչև [րե]ղիս յայս, զի և սար [փառա]ւոր եղիցի անուն իմ առաջի կողմանց հեթանոսաց հիսիսականաց: Մանասա[նդ] ///»,

Բա2 «/// յայն /// պար[րասարեցաք] զան[քն]ին /// ձեզ և որ միանգամ /// զձեզ իցեն: /// յերկար որոյացեալ մինչև [թմբ]եալ [ի]նեին մարդ[ի]կն յահէ անարի. [և բազմ]աց ընդորոցեալ [բա]զում երկվարք հեծելոց [անգոշ]եալ յահի անարի զբազումն ընկեցեալ և զ/// (3 րոդ)»,

Աբ2 «[չարիք] և [արհաւ]իրք ի վերայ մարդկանն /// [մե]տան, և բազմաց արինն հեղեալ զերկիրն ռոզգան[եր]: Արդ, իբրև այս շփոթ ամբոխի եղև ի նոցանէ ի մեջ ///» (Ազաթանգեղոս 2003, 1388–1390):

Ե, Զ պատառիկների նյութը որոշել չհաջողվեց. Եա, Զա և Զբ էջերը բավակապին դժվարընթեռնելի են, շատ տեղերում թանաքը թափված է, միայն տեղ-տեղ երևում են որոշ բառեր ու տառեր: Եբ-ից հնարավոր եղավ կարդալ. «Յիշէ՛ք զամենայն զարավարսն Իսրայէղի զառաջինսն զյԵշով, զԳեղեռմէ, զՅեփային և զայդսն ամենայն /// ճշմարիտ հաւարացեալ էի: Հարին, կործանեցին զզարսն հեթանոսաց և» հատվածը:

Բ. 284ա էջի հետագայի այս հիշատակարանի թվականը առաջարկում ենք կարդալ ոչ թե «ՋԾԴ.»՝ 1505, այլ «ՋՁԴ.»՝ 1535:

«Դարձեալ յիշեցէ՛ք զպրացողն սուրբ Աւերարանիս զհոջայ Յովանէս (յրողամէջ՝ «գորդիան Բատոն»), որ ըստացաւ զայս ի հալլալ վասարակոց իւրոց, և զճնողս իւր՝ զիսօջայ Միքայէլն, և զմայրն իւր զՄաղսումն, և զգոյր արեան մերձատրքն, և եղիր (յրողամէջ «ի Բաղէշ»), ի դոուն Հինքխորանին՝ յիշարակ իւր ծողացն: Թէ որ յանդնի կամ ծախէ, կամ գրաւէ, զպարիժն Յոդահին սոցէ և զհաչուածոց. ամէն: Թվին ԶԶԴ. (1535)»: (նկ. 2)

Գ. 284բ էջի անթվակիր հետագայի հիշատակարանը թվագրում ենք 17-րդ դարով և ավելացնում ավարտի մեկ նախադասությունը, որը վրիպումով բացակայում է հրապարակումից:

«Ես՝ սպրուսածաւեր և բարեմիւր Ղալաբէկիս երոս նորոգել զսուրբ Աւերարանս յիշարակ հոգոյ իմոյ և ծողացն՝ հորն՝ Ամիրջանին, և մօրն՝ Մարգարտին, և որդոցն՝ Աշխանին, Ամիրաղին, որ ի պարսիցն սրահողող եղեալ կարարեցան առ Ասրուած, և դարերացն՝ Գուգալաղային, Սալամուն, յիշեցէ՛ք ի Քրիստոս, և Ասրուած ողորմի սասցէ՛ք, Ասրուած ձեզ ողորմեսցի. ամէն: և եղին ի դոուն արծիաքեր Սուրբ Ասրուածածինն անջինջ յիշարակ հոգոյ իւրոց. ամէն» (նկ. 3):

Թե՛ն այս, և թե՛ն նախորդ հիշատակարանը գրված են բոլորգրով:

Դ. Ձեռագրում չկա այն մագաղաթյա եբրայերեն պատառիկը, որի մասին հրապարակման մեջ ծանոթությամբ նշել է Օ. Եգանյանը. «Վերջում 1 թերթ եբրայեցերեն գրությամբ մագաղաթյա պարատիկ, որ պարսիսարար դրված է ձեռագրի մեջ» (Եգանյան 1984, 252):

Հ՞մր 693 Բառգիրքը, որը գրաբարից աշխարհաբար բառարան է, իրականում ունի ավելի շատ հետագայի հիշատակարաններ և հիշատակագրություններ, քան տրված է Օ. Եգանյանի հրապարակման մեջ: Ընդ որում, դրանք կարևոր են իմաստալու համար ձեռագրի անցած ուղին և նրա տերերին: Այսպես, եթե գրչության հիշատակարանից իմանում ենք, որ Բառգիրքը 1850–1853 թթ. գրել է տիրացու Մելքոն դպիր Տէր Մելիքսեթեանց Ագուլեցին իր համար, ապա հետագայի հիշատակագրություններից տեղեկանում ենք, որ 1875 թ. այն արդեն գանձակեցի Աղեքսանդր Հալաբյանցի սեփականությունն է, և նույն տարում էլ նրանից ձեռագիրը գնել է ոմն Սարգիս Պետրոսյանց: Ապա հիշվում են բառարանի տերեր ոմն Հարություն, Ալեքսանդր, Խաչատուր Եղեմյանցները:

Հ՞մր 741-ը, ինչպես և նշել է Օ. Եգանյանը, 18-րդ դարի նոտրգիր Ժողովածու է՝ Պաղտասար Դպիրի «Գրգուկս շահաւէտ»¹⁶ գործով և մի քանի հարցումներով ու տեսիլով¹⁷:

Հ՞մր 748 ձեռագիրը Կարսում 1850 թ. տէր Սիմոնի ձեռքով բոլորգրով ընդօրին-

¹⁶ Օ. Եգանյանի այն միտքը, որ «հրատարակությունը, որից ընդօրինակված է այստեղ, մատենագիտական աղբյուրներում չի արձանագրված» (Եգանյան 1984, 264), ժամանակավրեպ է. գրքի այս հրատարակությունն արդեն նշված է «Հայ գիրքը 1512–1800 թվականներին» մատենագիտության մեջ (Ոսկանյան և այլք 1988, 238–239), իսկ գրքի թվային տարբերակը հասանելի է առցանց Ազգային գրադարանի «Հայ գիրքը 1512–1800 թթ.» շտեմարանում (Պաղտասար Դպիր 1720):

¹⁷ Այս ձեռագրի դեպքում որևէ նոր բան չունենք ավելացնելու Օ. Եգանյանի նկարագրությանը, միայն նշենք, որ ձեռագիրն ունի նաև թանգարանի կնքադրոշմ և նշումներ:

նակված և անարվեստ մանրանկարչությանը զարդարված 22 թերթանոց Խորհրդատետր է. «Խորհրդատետր սրբազան պատարագի ըստ արարողութեան եկեղեցեացու Հայաստանեայց ի թուականութեանս հայոց ՌՄՂԹ., Փրկչին 1850 մայիսի 10, գրեցաւ ձեռամբ տէր Սիմոն քահանային ի Ղարս քաղաք»: Ձեռագրի հետագայի հիշատակարանից հասկանալի է դառնում, որ տէր Սիմոն քահանան 9 տարի անց արդեն Ալեքսանդրապոլ քաղաքում է. «Յիշատակ տէր Սիմէօն քահանային Ադուանեանց Օձնեցոյ ի չորսն ապրիլի 1859 ամի յԱղեքսանդրապոլ, զի ել յիշեալ քահանայն ի քառասնից առնելով զհաշտարարն պատարագ» (1բ):

Հ^մ 1017 Դասագիրք Բժշկարանի ձեռագիրը, գրված 1894թ. Պարսկաստանի Անգալի քաղաքում, բովանդակում է զանազան հիվանդությունների բուժման դեղատոմսեր՝ գրված հայերենով, երբեմն ընդմիջաբար հայատառ պարսկերենով:

Հ^մ 1140 ձեռագիրը 19-րդ դարում՝ 1864թ.-ից հետո գրված 169 էջանոց շղագիր մատյան է, որը բովանդակում է «Երանելի Մարիամ Մարգարիտայ Ալագոզեանի վարքը»¹⁸ խորագրով գործ:

Հ^մ 1141 ձեռագիրը 1864-1865 թթ. Վարդան Վարդիկյանի ձեռքով ընդօրինակված 202 թերթանոց նոտրգիր մատյան է: Բովանդակում է իտալերենից հայերեն թարգմանված «Յաղագս պարտուց և հոգւոյ եկեղեցականաց» վերնագրով գործ՝ բաղկացած 39 գլուխներից, որոնցից յուրաքանչյուրն ունի բաղկացուցիչ հոդվածներ: Տիրոգութեթը հայտնում է հետևյալ տեղեկությունները՝ «Յաղագս պարտուց և հոգւոյ եկեղեցականաց. գործ ի պէտս կիրառութեան եկեղեցական դպրոցաց, յօրինեալ ի Հայր Անտօնէ Ռիքարտի, թարգմանեալ յիտալերէնէ ի հայ բարբառ ի Սերովբէ վարդապետէ Բաճեան, ի Կարին քաղաքի, 1862: Յամի 1852 թարգմանեցի զայս մատեան ըստ սոյն կարգի, սակայն միմիայն օրինակ գտով այն, չգիտեմ՝ ի ձեռս որ բարեպաշտ անձին անկեալ, անհետ եղև, վասն որոյ վերստին հարկեցայ թարգմանիլ զսոյն ևս ի սմին ժամանակի»: Ձեռագիրն ունի գրչի հիշատակարան նոտրգրով՝ «Օրինակեցի ձեռամբս, որ եմ Վարդան Վարդիկեան 1864 ի 15 սեպտեմբերի, նոյն օրէ սկսեալ մինչև 1865 ի 1 ունիսի: Աւարտեցի հանգիստ և խաղաղ գրելով և ոչ զամենայն ջան ի կուրծս եղեալ աշխատ եղէ» (196ա), և պատվիրատու-ստացող Սերովբէ վարդապետ Քչուրյանինը շղագրով՝ «Ի գրոց Սերովբէ վ.ի Քչուրեան, որ դրամով ետու օրինակել տիրացու Վարդանայ Վարդիկեանին» (1ա):

Պատմության թանգարանում է գտնվում Սերովբէ վարդապետ Քչուրյանի ընդօրինակված նոտրգիր մի ձեռագիր (հ^մ 1150, Կարին, 1859), որը պարունակում է Յովհաննէս Փերոնեի¹⁹ «Հարցուպատասխան վարդապետութիւն բողոքականութեան վրայ ի կիրառութիւն ժողովրդոց» և «Հարցուպատասխան վարդապետութիւն ուղղափառ եկեղեցոյ վերայ ի կիրառութիւն ժողովրդոց» գործերը: Խորագրերի համաձայն՝ այս գործը իտալերենից հայերեն է թարգմանել նախորդ գործի թարգմանիչ Սերովբէ վարդապետ Բաճյանը, որից էլ ընդօրինակել է Սերովբէ վարդապետը. «անտի ձեռնագրեաց Սերովբէ Քչուրեան: Ի Կարին քաղաք 1859»:

¹⁸ Ըստ նյութի՝ Մարիամ Մարգարիտա Ալագոզյանը ապրել է 17-րդ դարում, վախճանվել է 1687թ.:

¹⁹ Պերոնեի մասին տե՛ս Perrone, Giovanni - Biblical Cyclopedica:

Հ^մ 1142-ը 18-րդ դարի նոտրգիր ձեռագիր է, որը բովանդակում է հայերի՝ Ռուսաստանում հաստատվելու համառոտ պատմությունը, Նախիջևան քաղաքի՝ Հովսեփ արքեպս. Արղությանի կազմած կանոնադրությունը²⁰ և Ղզլար քաղաքին վերաբերող մի շարք օրենքներ: Ձեռագրի վերջում ցանկագրված է Ղրիմի տարբեր եկեղեցիներից Նախիջևան տեղափոխված գույքը, որը Ղրիմից գաղթած հայերը բերել էին իրենց հետ:

Հ^մ 1143 ձեռագիրը «Բազմավեպ» հանդեսի 30 տարվա հատորների մատենագիտությունն է՝²¹ գրված 1873թ. նոտրգրով: Որևէ հիշատակարան, նշում չկա կազմողի կամ հետագա տերերի մասին:

Հ^մ 1144 ձեռագիրը բովանդակում է Հովսեփ Արցախեցու «Գիրք տեսական փիլիսոփայության» երկը, որը նոտրգիր գրչությամբ ընդօրինակել է Հովհաննես Պհաթուրյանը 1839–1840 թթ.-ին:

Հ^մ 1145-ը 19-րդ դարի շղագիր Երգարան է՝ Միքայել Նալբանդյանի, Ռափայել Պատկանյանի, Սմբատ Շահագիզի, Նահապետ Ռուսիյանի, Գևորգ Դոդոխյանի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Մներ Մներյանի, Խորեն Գալֆայանի և այլոց բանաստեղծություններով:

Հ^մ 1146-ը 19-րդ դարասկզբի շղագիր ժողովածու է: Պարունակում է Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոեմը և մի քանի ավելի ուշ շրջանի չափածո գործեր («Ուտանաոր ի վերայ քաջին Արամայ նահապետին մերոյ», «Չափաբերական յորդորակ վարժապետի առ աշակերտս իւր շարահիւսեալ ի Նոտոիննեան Ամթեցի Յօհաննէս վարդապետէ, յաշակերտեալ Սարգսի Շնորհալոյ արհիեպիսկոպոսի Կոստանդնուպօլսեցոյ ի վերայ բաղձանաց ուսման...», «Շարական յօրինեալ ի վերայ Ռուսաց Եկատարինեայ Երկրորդի՝ թագուհոյ, որ և երգի յամի յամի յամենայն եկեղեցիս հայոց Ռուսաստանու ի հանդիսաւոր ասուր տօնի նորա», «Ներկրթութին և խրատ, զորս եթէ բարեպետս ի գործ ածիցես զբազում օգոտս գտցես»): Ձեռագրում կա նաև մի չափածո տապանագրի ընդօրինակություն, որ բերում ենք ստորև.

«Տապանագիր ի վերայ պարոն Յակոբայ՝ որդոյ տէր Յովակիմայ Ագուլեցոյ, որ մեռաւ ի Մըլօս քաղաքին Գաղղիոյ յամին Քրիստոսի 1804ին և ի թուակաւութեանս հայոց ՌՄԾԳ.ին:

Շիրին հանգստեան պարոն Յակոբայ
 Ճէտ Ագուլեցոյ տէր Յովակիմայ,
 Գերեալ յԵգիպտոս չար ձեռամբ տաչկաց,
 Ծախի արծաթով մամլուք իշխանաց,
 Ազատեալ բազկաւ քաջ Պօնափարթին,
 Գայ ի Գաղղիա ընդ մամլուք գնդին,

²⁰ Նույն բովանդակությամբ մի ձեռագիր էլ պահվում է Մատենադարանում 3794 թվահամարի ներքո:

²¹ «Բազմավեպ»-ի միակ տպագիր մատենագիտությունը առաջին 50 տարիների հատորների նյութերի մատենագիտությունն է (Ընդհանուր ցանկ 1896: Ընդհանուր ցանկ նիւթոց յիսնամեայ բազմավիպաց Ա-Ծ...), ուրեմն սա «Բազմավեպ»-ի մեզ հայտնի առայժմ առաջին անտիպ մատենագիտությունն է:

Ի քսան և երեք ամաց հասակի
Մեռեալ ի Մլլօսն աստ հողով ծածկի,
Քհայագնեայ ընկերս թողո՞ւ տրտմալի
Յիշելով յաւէտ զբարս իւր սիրելի»:

Հ^մ 1147-ը 1877 թ. ընդօրինակված 502 թերթանոց շղագիր ձեռագիր է, գրիչը՝ Աշոտ Սառաճյանց: Այն բովանդակում է «Պատմություն քրիստոնեական եկեղեցւոյ. Ա-ԺԸ. դարեր» վերնագրով աշխատություն²²:

Հ^մ 1148 նտորգիր ձեռագիրը բովանդակում է Մարիամ Աստուածածինն ւկիրված չափածո ստեղծագործություններ՝ «Երգ առ Սուրբ կոյս Աստուածածին», «Երգ առ ամենասուրբ Աստուածածին առ ի յեղեղել յամենայն ժամ ջերմ սրտի» և այլն: Նրանցից «Ի մուտս ամանորյա երգի առաջի ամենապատիւ Տ.Տ. գերապայծառ Մելիքսեդեկեան աստուածընտիր եպիսկոպոսի վիճակիս Կարնոյ» խորագրով վերջում ունի թվական՝ «30 յուլիս 1867 ի Կարին»²³: Ուստի ձեռագիրը կարելի է թվագրել 19-րդ դարի երկրորդ կեսով:

Հ^մ 1182-ը Հնայությունների ու գուշակությունների գիրք է, նտորգիր, չունի գրչության ժամանակի որևէ հիշատակարան, թվագրելի է 18-րդ դարով:

Հ^մ 1183 ձեռագիրը 1840 թ. Ախալցխայում գրված նտորգիր Ռամգիրք է, որի սկզբի մի քանի թերթերը պարունակում են գուշակություններ ըստ լուսնի օրերի և կենդանակերպի նշանների: Ռամգիրքի տիտղոսաթերթը տեղեկություններ է տալիս ձեռագրի ստեղծման հանգամանքների մասին «Գիրք, որ կոչի Ռամի: Դուռն, որ կոչի իմաստութեան և Ռամհարութեան արհեստին, որ է տեսակ իմն դիւթութեան, արարեալ ի Դանէլ մարգարէին և Ապտահին և այլոց իմաստնոց վալանջոց փիլիսոփայից, կրկին գրեալ եղև ձեռամբ Գէորգ քահանայի Գրիգորեան ի յԱխլցըխայ քաղաքի, որ կոչի Տայք, ի վաղեմի օրինակէ գրեալ ի Կարին քաղաքի հարուստ և ընտիր օրինակէ բազում աշխատութեամբ ի վայելս անձին իմոյ և յիշատակ արտաքին իմաստութեան ցանկացող եղբարցն իմոց, ոյք ճանաչեն և գիտեն զայս արհեստս սակաւ մի ծայրի մատեն ճաշակեն զիմաստս գրելոց ի սմա առ բարիսն, որք խոկան: Ի ՌՄԶԹ. (1840) թուոջս հայոց և ապրիլի 17, և կայ ի սմա մասն ինչ և հարուստ Վեցհազերեկին, որ արարեալ Անանիա Շիրակացոյ այսմ արհեստի տեղեակ լինողն իմաստութեամբն իւրով կարօղ է զանձն իւր ապահով պահել ապառնոյն և ներկային»:

²² Մատյանի առաջին էջին գրչի ձեռքով գրված է «Տետրակ կրօնագիտության». անհասկանալի է՝ գրիչն այս ծավալուն գործը նկատի ունի «Տետրակ» անվան ներքո, թե՛ այն բովանդակության հետ կապ չունեցող ուղղակի գրություն է:

²³ Այս ձեռագիրը թվականով և Կարինի հիշատակումով կապվում է հմր 1141 և 1150 ձեռագրերի հետ: Ապա այս 3 և ևս 4 ձեռագիր (հմր 1140, 1143, 1144, 1145) թանգարանը ստացել է միևնույն անձնավորությունից: Այդ 4 ձեռագրերից 1140-ը՝ «Երանելի Մարիամ Մարգարիտա Ալագոզեանի վարքը» թեմատիկայով մոտ է 1141 և 1150 ձեռագրերին, մնացած 3-ից մեկը «Բազմավեպ»-ի նյութերի ցանկն է, մյուսը Հովսեփ Արցախեցու «Գիրք տեսական փիլիսոփայության»-ը և վերջինը «Երգարան»: Այս ամենն անուղղակիորեն մեզ կարծել է տալիս, որ 1944 թ. Յուրա (Յուտամ) Նիկողիսայից ստացված բոլոր ձեռագրերը պատկանել են մի մարդու, որը 19-րդ դարի 2-րդ կեսին ապրել կամ գործել է Կարինում, եղել է հոգևորական, ամենայն հավանականությամբ կաթոլիկ: Գուցե դա եղել է հենց Սերովբե վրդ. Քչուրյանը, ում անձնական ձեռագրերը մինչև 1944 թվականը միասին էլ պահվել են:

Այս ձեռագրի գրիչ Գևորգ քահանա Գրիգորյանի՝ այլ ձեռագրից թերթեր կան ՀՊԹ-ի պատառիկների մեջ: Մասնավորապես ստորև ներկայացվելիք հ^մ 1164, 1166, 1167 և 1176 պատառիկները գրված են նրա ձեռքով, որոնցից 3-ը՝ հ^մ 1166, 1167, 1176-ը, ունեն նրա անունով հիշատակարաններ: Ձեռագիրը և պատառիկները ՀՊԹ-ում գրանցվել են 1972 թ.: Նույն թվականին են գրանցված նաև հ^մ 1184 Ախտարքը և մյուս բոլոր պատառիկները: Հավանական ենք համարում, որ սրանք բոլորը Գևորգ քահանային պատկանած ձեռագրերն ու դրանց պատառիկներն են: Նման ենթադրության համար հիմք է ձեռագրերի ու պատառիկներից շատերի բովանդակության նմանությունը՝ Ռամգիրք, Ախտարք, տարբեր տոմարական աղյուսակներ ու գուշակություններ:

Հ^մ 1184-ը նտորգիր Ախտարք է, կարելի է թվագրել 18-րդ դարավերջով: Բովանդակում է աղոթքներ, հմայագրեր, գուշակություններ ըստ կենդանակերպի նշանների:

Գրեթե բոլոր աղոթքներում վերջում կա ստացողի անունը՝ «ծառայիս Աստուծոյ Մկրտչիս» կամ «Խաթունի որդի Մկրտչի», ավելի ուշ ձեռագրի հաջորդ տերը՝ ոմն Պողոս, որոշ տեղերում ջնջել-եղծել է Մկրտչի անունը՝ փոխարենը գրելով իր անունը. «Մարեանի որդի Պողոսիս»:

Ախտարք է նաև **հ^մ 1187** ձեռագիրը (19-րդ դար, նտորգիր): Մատյանի 50ա էջում կա հիշատակագրություն. «եղիցիք ազատութիւն ծառայիս Աստուծոյ Աննայի որդի Պաղտասարիս»:

Այս Պաղտասարի անունը հիշատակվում է նաև ՀՊԹ-ում պահվող հաջորդ՝ **հ^մ 1188 ձեռագրում**, որը ևս 19-րդ դարով թվագրվող նտորգիր Ախտարք է: Այն բովանդակում է տարբեր հիվանդությունների համար դեղատոմսեր, զանազան գուշակություններ: 2ա, 3բ էջերում նյութերից հետո, ինչպես լինում է ախտարքներում կամ հմայագրերում, հիշված է ձեռագրի տիրոջ անունը, ում պետք է պահպանեն հմայագրերը: Այստեղ նշված է «Աննայի որդի մահտեսի Բաղտասարիս կամ Ներսեսիս» (2ա), «ծառայիս Աստուծոյ Աննայի որդի մահտեսի Բաղտասարիս» (3բ): Իսկ 113բ էջում կա նաև թվակիր հիշատակագրություն. «1888 նոյեմբերի դասնհինգ հտ. գիր է դալուխին մեջով, պատկանում է բոլոր մահտեսի Բաղդասար Մարգարովին գորիսեցի Զանկագուրու կաւառին»:

Մեկ այլ հետազայի հիշատակարան էլ կա 1բ էջում «Գրեցաւ ի դեկտեմբերի 10, ի սուրբ յանապատն Չարեքայ, ճանապարհ արարեալ ի քաղաքն գնացին հասին ի քաղաքն Գանձակ»:

Աննայի որդի մահտեսի Բաղդասարին է պատկանել նաև **հ^մ 1190** փոքրածավալ (30թ.) նտորգիր **Ախտարքը**: Այս մաշված, հիմքից թուլացած թերթերով, խոնավության և աղտոտվածության բազում հետքերով ձեռագրում զանազանելի է 4 տարբեր գրչի ձեռք, թեև ձեռագիրը գրչության ժամանակի հիշատակարան չունի: Միայն Բա Պատառիկ-պահպանակին կա ստացողի հիշատակագրություն «Եղիցիք ազատութիւնն ծառայիս Աստուծոյ Աննայի որդի մահտեսի Բաղդասարիս. ամէն, օգնական և պահապան եղիցիք. ամէն, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Աստուածածին, բարեխոսեան»: Մահտեսի Բաղդասարի անունը ավելացրած է նաև որոշ նյութերի վերջում: Ձեռագիրը բովանդակում է գլխացա-

վի, սրտացավի, աչքացավի, բորոտության դեմ դեղատոմսեր, չարի և ցավի դեմ որոշ աղոթքներ և գրեր:

Նույն մահտեսի Բաղտասարին է պատկանել նաև **h^{4p} 1194** նոտրգիր Ախտարքը (39 թերթ): Այս ձեռագրում ևս կան նրա անվամբ հիշատակագրություններ. «/// (1–2 բառ) Գորի[ս] /36ա/ պատկանի գիրս մահտեսի Պաղտասարին» (35բ, շղագիր), «Եղիցիք օգնական և պահապան, ո՛վ սուրբ զօրությիւնք երկնից և երկրի Աննաի որդի մահտեսի Պաղտասարին» (Պհպ. Բբ, շղագիր):

Մահտեսի Բաղտասարի անձնական հավաքածուն ամբողջացնում է ՀՊԹ-ի **1192 թվահամարի** ձեռագիրը: Այն 19-րդ դարով թվագրելի ընդամենը 37 նոտրգիր թերթից է բաղկացած: Պարունակում է ամբողջական ու հատվածական աղոթքներ ու սաղմոսներ, մի քանի տաղ և Պատարագամատույցի մաս: Այս ձեռագրի բացատրությունը նրա կազմն է. ավելի ճիշտ որպես կազմ օգտագործված Բաղդասարի անձնագիրը (նկ. 4): Ձեռագրի 37 թերթը կարված է Բաղդասարի՝ արտասահման մեկնելու համար տրված անձնագրի մեջ: Հ^{4p} 429 անձնագիրը 1873թ. նահանգապետի կողմից տրված է Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուր գավառի Գերուսի²⁴ քաղաքի բնակիչ Պաղտակիլ Մարգարեանին՝ Երուսաղեմ ուխտագնացության մեկնելու համար: Անձնագիրն ունի կապտականաչ կազմ, պահպանված են 2 պահպանակներն ու 8 թերթերը (առաջին էջի նշումի համաձայն՝ անձնագիրն ունեցել է 24 էջ):

Ստորև տալիս ենք անձնագրում եղած գրություններն ըստ էջերի.

էջ 1. «Заграничный Паспортъ – 24 страницы N 429

Подпись владільца – Պաղտակիլ Մարգարեան

էջ 2. Предъявитель сего – Житель Елизаветпольской губерній, Зангезурскаго уїезда, селенія Герусы, Багдаголь Маркаровъ, уволенъ въ Турцію въ городъ Иерусалимъ на богомолье, срокомъ отъ нижеписаннаго числа на одинъ годъ.

էջ 3. дань сей паспортъ съ приложеніемъ печати. Въ Елизаветполь октября 24 дня 1873 года. Елизаветпольский Губернаторъ

Правитель Канцеляріи – ստորագրված²⁵

Տր. 7 ֆրանսերեն գրություն 1873թ. «Le Gerant» ստորագրությամբ և բոլորակ, կապույտ թանաքով լատինատառ և արաբատառ կնիքով:

էջ 14 – ավելի ուշ շղագրով «Դեկտեմբերի 28ին շաքար բացին ելի 20ին էլի-նօթ բացինք դեկտեմբերի»:

Այն, որ Պաղտակիլը նույն Պաղտասարը կամ Բաղդասարն է, փաստվում է նրա ազգանունով՝ Մարգարով, վկայված անձնագրում և **h^{4p} 1188** ձեռագրում, Ջանգեզուր գավառի Գորիս քաղաքից լինելը (դարձյալ նշված և՛ անձնագրում, և՛ **h^{4p} 1188** ձեռագրում), մահտեսի կոչվելը բոլոր ձեռագրերում և անձնագիրը Երուսաղեմ ուխտագնացության համար տրված լինելը: Ընդ որում, քանի որ անձնագիրը ստաց-

²⁴ Ռուսերեն աղբյուրներում «Գերուսի» ձևով կոչվում է Գորիս քաղաքը (Հակոբյան և այլք 1986, 855):

²⁵ Ստորագրությունը և սև թանաքով բոլորակ կնիքը խոնավության պատճառով անընթեռելի են:

ված է 1873 թ.-ին 1 տարով, ուրեմն կարելի է ենթադրել, որ բոլոր ձեռագրերը, որտեղ Բաղդասարը հիշված է իբրև մահտեսի, ձեռք է բերել 1873 թ.-ից հետո (կամ էլ արդեն ունեցած ձեռագրերում հիշատակագրություններն արվել են դրանից հետո):

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ 1873 թ. Երուսաղեմ ուխտագնացության թույլտվություն ստացած և հաջորդ 1 տարվա ընթացքում այն իրականացրած մահտեսի Բաղդասար (Պաղտակիյ) Մարգարովը 19-րդ դարի երկրորդ կեսին հավաքել է Ախտարք տեսակի ձեռագրեր, որոնք (կամ որոնց մի մասը) 1972 թ. հանձնվել են ՀՊԹ և գրանցվել 1187, 1188, 1190, 1192, 1194 համարների ներքո: Քանի որ նույն թվականին ենթադրաբար սրանց հետ²⁶ թանգարանին են հանձնվել նաև նույնաբնույթ հ^մ 1183, 1184 և 1189 Ախտարքները, որոնցում սակայն չկա մահտեսի Բաղդասարի անվան հիշատակում, կարծում ենք, որ կան սրանք ևս նրա ձեռագրերն են առանց նշումների ու հիշատակարանների, կան հետագայում Բաղդասարի հավաքածուն անցել է ինչ որ մեկին, որն էլ այն համարել է այս վերջին 3 ձեռագրով, ու արդեն թանգարան են հանձնվել 8 ձեռագրերը միասին:

Հ^մ 1189 Ախտարքը 18-րդ դարով թվագրվող նոտրգիր փոքրածավալ մատյան է: Ձեռագիրը բովանդակում է պահպանության գրեր և զանազան հիվանդությունների բուժման դեղագրեր:

Հ^մ 1191 ձեռագիրը 20 թերթանոց Աղոթարան է, որը 1891 թ. կամ դրանից առաջ գրել է ոմն Հովակիմ Ղազարյան: Նա ձեռագրի 2ա էջում իր մասին թողել է հետևյալ չափածո հիշատակարանը.

Դօլորս գիղացի եմ բէկիցն զըզուած,
Տունս տեղս թողած, Բնունիս եկած
Օտարութեան մէջ եմ ազգիցըս գրկուած,
Չի մեռած տեսնէի որդիքս հասած (մեծացած):
Արհեստաւ ջուլիակ եմ, գործում եմ կըտաւ,
Դըփիս միշտ խըփում եմ երգով խաղալաւ,
Մըլմիս շուռ եմ տալիս միշտ ճըռճըռալաւ,
Մաղլախըս խըփում եմ գլխաքարն թափ տալաւ:
Ջախարագըն բերեք, մասրէքս լըցնեմ,
Հաց ուտեմ, կըշտանամ, հորիս մէջ նըստեմ,
Ասպու ճըլվըլենքըն իմ ձեռքովս տըրստեմ,
Օրէկան մէկ թոփ կըտաւ հէշտ կպատրաստեմ:
Կըռէչանըս հորից հանիր մ[ա]լքուքըն,
Աստուած պագաս չա[նի] քո աշխատանքըն,
Հաստատ մնայ իմ հայր Ծատուրի քօքըն,
Ինձ չէր արժան վայելել նորայ մուլքըն:
Ես աղքատ Ղազարն եմ,
Խոխերքըս մանդըր,
Իմ գործիքըն է դփի, սլմի,
Մաղլախ, մքուք և սանդր:

²⁶ Այսպես կարծելու հիմք է տալիս ձեռագրերի ստացած հաջորդական համարակալումը:

Պահպանիչ աղոթքների վերջում եղած հիշատակումներից իմանում ենք նաև Ղազարի մոր անունը. «...պահեան Սառայի որդի Յովակիմ ծառայա. ամէն» (4բ):

Ձեռագրում կան ամենայն հավանականությամբ Ղազարի ընտանիքի անդամների ծննդյան մասին տեղեկություններ.

20ա «Աստուածատուրն ծընեալ է 1891 ամի 28ին յունվարի լուսն[ի] 30ին օրըն երկու շաբաթ առաօտեան 6 ժամի:

Անդրիասն ծընեալ է 1893 ամի 10ին մայիսի լուսնի 7ին, օրն երկու շաբաթ, առաօտեան 9 ժամի:

Աննահիդըն ծընեալ է 1896 ամի 29ին հօգտեմբերի լուսնի 6ին, օրըն չօրեքշաբաթ:

Առաքելն ծընեալ է 1899 ամի օգոստոս 20ին օրն ուրփաթ:

Յակոբն ծընեալ է 1902 ամի 24 սեպտեմբերի օրն շաբաթ լոյսնի 4ին»:

Հ^մ 1193 ձեռագիրը 19-րդ դարով թվագրելի Երգարան է («Տաղ ի վերայ Սուրբ Փրկչականքին», «Տաղ ուրախութեան», «Երգ պանտողոս պատանեկի», «Միլիսամալի», «Տաղ խաչի» և այլն), ընդամենը 20 թերթ, անկազմ, դրված մի ստվարաթղթի մեջ:

Հ^մ 352-ը Մոկքի Սուրբ Գևորգ վանքի մի կոնդակ է (19-րդ դար), որով Աբրահամ վարդապետը օգնություն է հայցում ուխտի կարիքների համար. «Արդ, ի գալ դորին առ ձեզ աղերսիս ինդրեմք ի ձէնս, զի յամենայն կողմանց օգնութիւն առնիցէ սրբոյ փանս զմիմեանս յորդորելով ի փոքս ողորմութեան թէ ժամոց, թէ քառասնից, թէ խոսարմնք, թէ մաքրաղ, թէ յիշենք, թէ անօթ սուրբ եկեղեցոյ, թէ հոգեբաժին, թէ ջլից, թէ արծաթեղէն, թէ պղնձեղէն և թէ այլ արդիւնք, զինչ որ վայել է այս երկնահասնդէս սրբոյ փանս, զամենայն յանձնեալ փայք ի ձեռս հարազատ որդւորդ մերոյ այս նամակաբերիս, զի ի դմա հասեալն, մեզ և ի սուրբ ուխտս է հասեալ...»:

ՀՊԹ-ի հայերեն պատառիկները

Ֆոնդում պահվում են նաև հայերեն ձեռագրերի առանձին թերթեր, որոնք ընդունված է անվանել պատառիկներ: Այդ պատառիկները ևս համարակալված են, կրում են 1158–1180, 1185 և 1186 համարները: Յուրաքանչյուր համարի ներքո երբեմն 1-ից ավելի թերթեր են, որոնք թերթակալել ենք, իսկ 1186 համարի միավորը բաժանել Ա–Ը միավորների: Բացի հ^մ 1179 պատառիկից (մագաղաթ, նկ. 5)՝ մյուսների նյութը թուղթ է:

Պտո. 1158 – 1 թերթ 17-րդ դարի նոտրդիր Տոմարական ձեռագրից: Մեծությունը՝ 20,7×14: Բովանդակում է 2 աղյուսակ՝ «Զմոլորաշարժումն մոլորականց» և «Աղիսակ Հոռոմաց, կենդանակերպ, գօտի, աշխարհացոյց»:

Պտո. 1159 – 1 թերթ 18-րդ դարի նոտրդիր Հմայական աղյուսակ: Մեծությունը՝ 23×16:

Պտո. 1160 – 1 թերթ 19-րդ դարի նոտրդիր Հմայական աղյուսակ: Մեծությունը՝ 32×11,5:

Պտո. 1161 – 3 թերթ 18-րդ դարի նոտրդիր Ախտարքից: Մեծությունը՝ 15,5×10,5:

Պտո. 1162 – 1 թերթ 19-րդ դար, նոտրդիր հիշատակարան (1516 թ.): Մեծությունը՝ 18×10,5:

«Ի հնագոյն և ի հին շարականէ գրեց, որ յերոյ գրելոց եմ, ի հին գրչագրոյ իմոյս.

Փառք ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ: Հոգոյն Սրբոյ պարզևողի (1 րոդ բաց թողած) [ո]րդոց ադամածնի հասարացելոց որդոյն Միածնի, որ ցանկացող եղև այս երգարանի, գրել զսա մեղսամած գրչի, որ Յօհաննէս սուրանուն արեղայ կոչի, որ ես զանունս միայն սոի, գործովք ի լի եմ աղբերդի, խոցեալ ներիւք սարանայի: Գրեցաւ գիրքս, որ Շարակնոց կոչի, ի յերկիրս Սպերի ի վանքս Սուրբ Միքայէլի հրեշտակապետին և Սուրբ Կարապետի ի թվին ԶՃԿԵ. (1516) ի լաւ և ի ընտիր օրինակէ և խազն ուրիշ: Գրեր խոշորութեան և այլայլութենէն մի՛ մեղադրէք մէկհետէ չգրեցաւ, Գ. Տարին ապա խալսեցայ»²⁷:

Պատ. 1163 – 2 թերթ 18-րդ դարի նոտրդիր Ախտարքից: Մեծություն՝ 18,5×11,5:

Պատ. 1164 – 1 թերթ 19-րդ դարի շղագիր Տոմարական նյութ: Մեծություն՝ 17×20,5:

Գրված է հմր 1166 և 1167 պատառիկների գրչի՝ Գևորգ քահանայի ձեռքով:

Պատ. 1165 – 1 թերթ 18-րդ դարի Գուշակողական-հմայական բնույթի նոտրգիր ձեռագրից: Մեծություն՝ 23×17,5:

Պատ. 1166 – 1 թերթ 1858 թ.-ի Տոմարական նոտրգիր ձեռագրից: Մեծություն՝ 30,5×10,5: Գրիչ՝ Գևորգ քահանա Գրիգորեան:

Ունի հիշատակագրություն՝ «Սուրբ Բարաքիէլ րոտր յաջողութիւն Գէորգ քահանայիս»: Հաջորդի հետ նույն ձեռագրի թերթեր են:

Պատ. 1167 – 2 թերթ 1858 թ.-ի Տոմարական նոտրգիր ձեռագրից: Մեծություն՝ 33×21,5, 17,5×16,5: Գրիչ՝ Գևորգ քահանա Գրիգորեան:

Ունի 2 հիշատակարան.

1ա «Գրեցաւ ի 1858 ամի Տեառն և հայոց ՌՅԸ. թուին յունիսի 26 յԱխլցիսայ քաղաքի ձեռամբ և աշխարութեամբ Գէորգ քահանայի Գրիգորեան: Խնդրեմ, եթէ օգրիք ի ամանէ բան ինչ, յիշեցէք զգծող սորին»:

2ա «Գրեցաւ ի 1858 ամի Տեառն և հայոց ՌՅԸ. ամի մայիսի 10ին աշխարութեամբ Գէորգ քահանայի Գրիգորեան Ախլցիսայ քաղաքի: Եթէ օգրիք բան ի ամանէ, յիշեսցիք զգծող սորին»:

Նախորդի հետ նույն ձեռագրի թերթերն են:

Պատ. 1168 – 1 թերթ 18-րդ դարավերջի նոտրգիր Հմայական գիր: Մեծություն՝ 15×11:

Պատ. 1169 – 2 թերթ 18-րդ դարի Գուշակողական շղագիր նյութեր: Մեծություն՝ 22×17:

Պատ. 1170 – 1 թերթ 18-րդ դարի նոտրգիր Դեղաբուսակ և գուշակողական նյութեր: Մեծություն՝ 15×10,5:

Պատ. 1171 – 1 թերթ 18-րդ դարի նոտրգիր Ախտարքից: Մեծություն՝ 16,5×13,5:

Պատ. 1172 – 1 թերթ 18-րդ դարի նոտրգիր Ախտարքից: Մեծություն՝ 16×10,5:

²⁷ Պարզել ենք, որ սա ՄՄ 3423 Շարակնոցի 300ա էջի հիշատակարանի ընդօրինակությունն է (ՄԱՅՐ ՅՈՒՑԱԿ ԺԱ): Համեմատությունը ցույց է տալիս, որ այստեղ կան ձեռագրից տարբեր ոչ էական որոշ վրիպումներ: Մենք տալիս ենք այնպես, ինչպես կա պատասխիկում:

Պսոմ. 1173 – 3 թերթ 18–19-րդ դարերի նոտրդիր Ռամգրքից: Մեծություն՝ 16,5×10:

Պսոմ. 1174 – 1 թերթ 19-րդ դարի նոտրդիր Տոմարից (լրումն լուսնի, Ջատկի): Մեծություն՝ 31×21,5:

Պսոմ. 1175 – 2 թերթ կենդանակերպի աղյուսակով գուշակություն, 19-րդ դար, նոտրդիր: Մեծություն՝ 20,5×16:

Պսոմ. 1176 – 1 թերթ 1851թ. նոտրդիր Տոմարից: Մեծություն՝ 21×15: Գրիչ՝ Գեորգ քահանա Գրիգորեան: Ունի հիշատակարան՝

Լա «Գրեցաւ ձեռամբ Գեորգ քահանայի Գրիգորեան ի Արլցիսայ քաղաքի 1851 ամի և մայիսի 9ին»:

Ծնթ. Գեորգ քահանայի մյուս պատառիկներից տարբեր թղթի վրա, նրանց մասը չէ:

Պսոմ. 1177 – 1 թերթ 19-րդ դարի նոտրդիր գուշակողական նյութ: Մեծություն՝ 17,5×13:

Պսոմ. 1178 – 1 թերթ 19-րդ դարի 2 աղյուսակ՝ այբուբենի տառերով և արաբական թվերով: Մեծություն՝ 16,5×11:

Պսոմ. 1179 – 2 մագաղաթե թերթեր²⁸ ԺԱ. դար, ուղղագիծ երկաթագիր Ավետարանից:

թ. 1 – Մեծություն՝ 16×14, ընդլայնակի և ընդերկայնակի կտրած, առկա միայն առաջին սյան ստորին 8 տողը: Ունի մասամբ վնասված լուսանցազարդ (կապույտ-դեղին, կանաչ), ստորին լուսանցային համաբարբառ: Բովանդակում է հատվածներ Մարկոսի Ավետարանից՝ Դ. 31–35:

թ. 2 – Մեծություն՝ 17×12,5, կտրած ընդլայնակի և ընդերկայնակի, առկա երկրորդ սյան ստորին 7 տողը: Բովանդակում է հատվածներ Մաթնոսի Ավետարանից՝ ԻԲ. 45–46, ԻԳ. 2–3:

Պսոմ. 1180 – 14 թերթ 18-րդ դարի նոտրդիր Դեղագրքից: Մեծություն՝ 18×11:

Պսոմ. 1185 – 18-րդ դարով թվագրելի շինծու բոլորգիր Հայսմավուրքի 3 թերթ: մեծությունը՝ 35×20,7²⁹: Բովանդակում է. «Արեգի ԻԶ և Մարտի ԺԴ. Վարք և պատմութիւն սրբոյն Գոշին Մխիթարայ»:

Պսոմ. 1186Ա – 4 թերթ 17-րդ դարի նոտրդիր Աղոթարանից: Մեծություն՝ 10×7: Բովանդակում է Ստեփաննոս Նախավկային և Հովհաննես Մկրտչին նվիրված աղոթքներ, լուսանցներում կան նրանց պատկերներով մանրանկարներ:

Պսոմ. 1186Բ – 2 թերթ 17-րդ դարի բոլորգիր անհայտ քարոզից: Մեծություն՝ 17,5×12:

Պսոմ. 1186Գ – 4 թերթ 17-րդ դարի նոտրդիր անհայտ գործից: Մեծություն՝ 18,5×12,5:

«Պրակք երկու տասաներորդ. Թէ բնական բանին ի կենցաղումն զԱստուած

²⁸ Դատելով թերթերի ծալումից՝ եղել են ձեռագրի պատառիկ-պահպանակներ:

²⁹ Լա, Յբ էջերին ունի ձվածիր մանուշակագույն թանաքով երկշերտ եզրագծած կնքադրոշմ, որի ներսում «ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ», մեջտեղում «Հ. Հ.»: Ապա այս կնքադրոշմները ջնջել են, և Լա էջում դրվել է ՀՊԹ-ի կնիքը:

ճանաչել կարենք... Պրակք երեքրասաներորդ. Թէ ճանաչումն Ասրուծոյ ի ձեռն շնորհին բարձրագոյն կալեալ լինի, քան զայն, որ է բնական բանին»:

Պսո. 1186Գ – 1 թերթ հայատառ այլալեզու նտորգիր նյութ, 17-րդ դար: Մեծություն՝ 16×12:

Պսո. 1186Ե – 1 թերթ նտորգիր «Դասք հրեշտակաց», 18-րդ դար: Մեծություն՝ 15×125:

Պսո. 1186Զ – 4 թերթ նտորգրով Այգու առուծալի պայմանագիր, 1666 թ., Մեծություն՝ 14×9:

1ա «Յանուն Ասրուծոյ եւ՝ Խերարինս, իմ աղբեր Բարդողիմէնսս ծախեցինք ներկարարանց ծիլ Յառաքելի ծիլ այգին էլ գնեցի, րվի պարոն Միրիմանին, իր որդանցն՝ Շահվելուն, Զորասպին, Աթանդիլին, Ա. սնունն Էվանեսնայ, Ա. Բարաշանայ, Ա. Ամիրխանն, Ա. սնունն Խերարինայ իր յընծանովն, իր փաքարովն, յառագասարովն, իր բակովն, կարասովն մեր սրբի առաքութեամբ ծախեցին վերայ Մերիմանին, այլ ոչում բան և դաի չկայ ոչ իմոց և ոչ աւարաց: Տանուբեր Պաղոսս վկայ, Խէչիկն, Կակոս, Էվանէս վկայ, Դարմիշիան վկայ, Սարուխան, Միրզէն, Մարգարէն վկայ, յուսրայ Գարբէլն վկայ, Վար/Իր/դանէս, Խոցիկն վկայ, Ամիրխան, Թումանշէն վկայ, սարկասաք Հանէս վկայ, եւ՝ անարժան սարկասաք Գրիգորս գիր գրեցի, վկայ եմ: Ով որ յետոս առաջ փայ, լաւոս հէքիմին Ե. թուման փայ: Թվին ՌՃԺԵ. (1666):

1բ Յանուն Ասրուծոյ եւ՝ Խերարինս, իմ աղբեր Բարդողիմէնսս մեր կամաւ ծախեցինք մեր յիգոցն յձանի կրրիցն հետ, սառաքաշն ի դոս, իր քարերովն /2ա/ մինչև Բարաշանի սինոնն րվինք Միրիմանքէկին և իր որդանցն, այլ ոչում բան և դաի չկայ ոչ իմոց և ոչ աւարաց, դիպայ ներկարարանց ծիլն րվինք: Ես՝ Միրիմանս, վկայ եմ, Խէչիկն վկայ, Գրիգորն վկայ, Էվանէս վկայ, Սարուխան վկայ: Ես՝ Գրիգորս, գիրս գրեցի, վկայ եմ: Ով որ յետոս առաջ փայ, լաւոս հէքիմին ԺԲ. Ռ. դահեկան փայ:

(Այլ ձեռքով) Ես՝ Վարդիգըս, մայի վերն կարան փիսիյ վարի հոշէն Ա. որավառվր իմ սրբի կամաւ ծախեցի վկայ պարոն Միրիմ Շինիհորոց, Հոսին վկայ րեր Ակոր (°) // (3-4 բառ դժուարընթեռնելի):

2բ Յանունն Ասրուծոյ եւ՝ Էվանէս Ներկարարանց իմ ծիլ Բ. կոճար, Ա. ծապան ծախեցի րվի Միրիմանքէկին և իր որդանցն: Այլ ոչում դաի չկայ: Ալիխասանց Խէչիկն վկայ, Ամիրխանն, Բարաշանն վկայ, րերրերանց Թամագն վկայ, Նաւասարդի րդայ Գալուսրն վկայ: Ես՝ րեր Ղազարս, գիրս գրեցի, վկայ եմ:

(այլ ձեռքով) Ես՝ Ալայվերիս, գիր րվի Միրիմանին, կէշի հողէն ինչ իմ հեր րվել էր րվել, մնացանցել ես րվի Միրիմանին վերի կոռն Ուլուխանինայ, ես Թումանս վկայ, ես Թամա[զ] վկայ, Ամիր//:

3ա Յանուն Ասրուծոյ եւ՝ Դերձկի որդիքս, Ղազարի որդիքս՝ Մէլիքս, Սարգիսս, Ալիխանս մեր կամաւ Բարաշանի այգոս բնատվի ծապանն ձերվի ձեր մինչև հոնին (տողամիջում ավելացրած՝ «ասպ վէր կոթ կոճար») մեր կամաւ ծախեցինք վերայ Միրիմանքէկին և իր որդանցն Շահվելուն, Զորասպին, Աթանդիլին: Այլ ոչում բան չկայ ոչ իմոց և ոչ աւարաց: Ով յետոս առաջ փայ, գոնասկար ըլի հէքի-

մին: Տէր Աւարն վկայ, Կէր Յոհանէս վկայ, Մարտիրոսն, Հովիկն վկայ: Ես՝ Փարսադանս գիրս գրեցի, վկայ եմ:

Յք Յանոն Ասրուծոյ եւ՝ Ղարչիւէս, ներկարարանց իմ այգին իր կարաստփն իր ճանճանոցոփն բիրդս ծախեցի, Կովի Միրիմանբէկին և իր որդանցն՝ Շահվէլուն, Զորասպին, Արթանդիլին: Այլ ոչում բան և դաւի չկայ: Պետրոսն, Յուսոբի Ծարորն, Բորողանանց Փիրին, Դերձկի Մէլիքն, Բարդողիմէոսն, /4ա/ բրուր Մուրարն, Բարաջանն, Ամիրխանի Սարգիսն, Շահրզանց Հովիկն հասասար վկայ են: Ես՝ Թումանշէս, գիր գրեցի, վկայ եմ: Ինչ մարդ, որ յերուստաջ փայ, Ե. թուման հէքիմին Կովոդ ըլլի:

4ա (Այլ ձեռքով) Ես՝ Դարձանց Սարքիս, Դաւիթս, Վարդանս, ծախեցիք Բարաջաննի այիգիոն: Մեր փայն Կով// իր անձիրձ կարս (՛) Միրիման բէկի և իր որդանց՝ Շահվէլ[ուն], Զորասպին, Արթանդիլին: Այլ ոչում բ[ան] և դաւ չի: /4ա/ Ես՝ Ալվերտին, Մէլիքն, Միրիչն, Կասարն վկայ: Կիսգ// ես՝ Կէր Խէչայրորս, գիրս գրեցի, վկայ եմ: Ասրուծ վկայ, ով յեր ու առաջ փայ, լոռու հէքիմին ԺԲ. փայ:

4բ Յանոն Ասրուծոյ եւ՝ Զորասպանց Խէչիկս իմ սրբի կամաւ իմ փոսի հողն բիրթաւ Կովի պարոն Միրիմանբէկին, և իր որդանցն: Հախն առայ իմ կարեացն արի, այլ ոչում դաւի չկայ, Ալահվէրդին վկայ, Յուսոբի Ծարորն, Դաւիթն վկայ, ես՝ Թումանշէս գիրս գրեցի, վկայ եմ»:

Պտո. 1186Է – 19-րդ դարի չթերթակալած նոտրգիր տետրակ «Վասն բառակաթոթի» և զանազան այլ նյութեր: Մեծություն՝ 17×11:

Պտո. 1186Ը – 1 թերթ 19-րդ դարում նոտրգրով ընթօրինակված Ագուլիսի Սուրբ Թովմա առաքյալի վանքի հյուսիսային (1695թ.) և հարավային դռների ներքևում գտնվող արձանագրությունները: Մեծություն՝ 22×10,5:

«Արձանագիր Սուրբ Առաքելոյն Թումայի –

Թվականիս հայկականի / մի յոթելեան երկշրջանի / եռակ փասանց, որով վարի/ սա կառուցեալ քառանկիւնի, / ձեռամբ Յոհան վարդապետի, / որ էր յաջորդ յայսրն գահի, / բազում ծախիք անթոնելի, / չորիք ամօք սա կարարի, / երիք դրամք ըսր խորհուրդի, / կամարակապ զարմանալի, / անուամբ մեծի Սուրբ Թումայի / մեան (=նման) վերնոյն ըսր Միօնի, / սա մեզ շնորհեաց պարզ բարի, / զասրուսածամուսի Աջն ձրի, / ամնոր պարուարք բոլոր թէմի, / պ[ա]լչօնէից իր հոգանի, / պարձանք է սա Գողթ զաւարի / և ցնծութիւն հայոց ազգի / նպաստութեամբ Տեան Յիսուսի / ի փառս անուան մի եռակի» (Այվազեան 2005, 66, Շահխաթունյանց 2014, 426–427):

«Իշխանութեամբ պարսից ազգի / Շահ Հիրէն թագաւորի, / դիւանբէկութեան Մուսաբէկի, / որ էր Կեղեաւ Ագուլեցի / և Յոհանու առաջնորդի / գերաիշխօղ յայսմ թէմի, / որոյ յաւորս սա կանգնի, / այս վայելոյչ եկեղեցի» (Այվազեան 2005, 65, Շահխաթունյանց 2014, 427):

Ո՞րոնք են Պատմության թանգարանի ձեռագրերի կարևորությունն ու արժեքը

Հայերեն ձեռագրերի կարևորության ու արժեքի մասին խոսելիս իբրև ելակետ պետք է ունենալ այն դրույթը, որ յուրաքանչյուր ձեռագիր, անկախ գրչության ժամանակից ու վայրից, եզակի է ու անփոխարինելի: Ուստի այն հանգամանքը, որ ՀՊԹ-ում համեմատաբար ուշ շրջանի և առաջին հայացքից անշուք ձեռագրեր են, չի կարող նվազեցնել դրանց նկատմամբ գիտական աշխարհի և ուսումնասիրողի հետաքրքրությունը: Բացի ձեռագրերի բովանդակության նկատմամբ եղած մասնագիտական հետաքրքրությունից՝ ուսումնասիրողների համար հաճախ կարևոր են նաև ձեռագրերում տարիների ընթացքում արված նշումները, գրություններն ու հիշատակագրությունները: Դրանք կարող են բավականին ուշագրավ տեղեկություններ պարունակել ոչ վաղ անցյալի որոշ դրվագների կամ որևէ ընտանիքի, տոհմի մասին: Ավելի ընդհանուր քննության դեպքում այս ամենը կարող է պատմել 18–19-րդ դարերում ձեռագրի և հայ մարդու հարաբերությունների, ձեռագրերի կիրառության և նրանց նկատմամբ եղած հավատալիքների ու պաշտամունքի մասին: Այս առումով բավականին կարևոր է, որ ՀՊԹ հասած ձեռագրերը չեն առանձնացվել իրարից: Դրա շնորհիվ թանգարանի ձեռագրերի մեջ հստակ ուրվագծվում են 3 անձնական հավաքածուներ՝ կազմավորված մեկը Արևմտյան Հայաստանում՝ Կարիսում, մյուսը՝ Արևելյան Հայաստանում՝ Ջանգեզուրում, և երրորդը՝ Ախալցխայում: Այս փոքրիկ հավաքածուների շնորհիվ երկու դար անց անգամ տեսանելի են դառնում դրանց տերերի նախասիրությունները և այն միջավայրը, որտեղ ապրել ու գործել են նրանք: Ավելին, ձեռագրի շնորհիվ պահպանվել և մեզ է հասել 19-րդ դարի երկրորդ կեսի անձնագիր՝ արտասահման մեկնելու թույլտվությամբ³⁰: Առավել մանրամասն քննությամբ որոշ դեպքերում հնարավոր է նաև գտնվեն այս ձեռագրերի գրիչների, ստացողների՝ այլ հավաքածուներում պահվող ձեռագրեր, որի շնորհիվ կլինեն նոր բացահայտումներ, կամբողջանան նրանց և նրանց թողած ձեռագրերի մասին մինչ օրս եղած տվյալները:

Եզրակացություն

Այսպիսով, ՀՊԹ-ի հնատիպ գրքերի ֆոնդում գրքերի հետ պահվում է 52 հայերեն ձեռագրական միավոր, որոնցից 26-ը՝ ամբողջական ձեռագիր, 25-ը Պատանիկ և 1-ը՝ կոնդակ: Այս ձեռագրերից մինչ օրս հայտնի էին միայն 3-ը՝ Օսնիկ Եզանյանի՝ 1980-ական թթ. հոդվածի շնորհիվ: Մյուսների մասին ցայսօր որևէ հրապարակված և հասանելի տեղեկություն չկար:

Ամբողջական ձեռագրերից հնագույնը հ^մ 692 Ավետարանն է (15-րդ դար), մյուսները 17–19-րդ դարերի նոտրգիր ու շղագիր ձեռագրեր են: Ձեռագրերից որոշներն ունեն գրչության և հետագայի հիշատակարաններ, տարբեր նշումներ, որոնք հնարավորություն են տալիս ուրվագծելու նրանց ստեղծման ու անցած ուղու պատմությունը:

³⁰ Հայերեն ձեռագրերի նկարագրության և ուսումնասիրության մեր աշխատանքի ընթացքում երբևէ չէինք հանդիպել ձեռագրի տիրոջ մասին առավել էական ու իրեղեն ապացույց, քան նրա անձնագիրն է:

Բովանդակային տեսակետից ձեռագրերի մեծ մասը Ախտարքներ, Բժշկա-
րաններ ու կրոնական բնույթի նյութեր են: Կան նաև Երգարաններ, բառարան,
խորհրդատետր: Պատառիկները հիմնականում Տոմարից, Ախտարքներից թեր-
թեր են: Թե՛ կազմության և թե՛ ձեռագրական ավանդույթի տեսակետից բոլոր
մատյանները, բացի 15-րդ դարի Ավետարանից, ունեն նոր շրջանի ձեռագրերին
բնորոշ առանձնահատկություններ: Գրության նյութը թուղթն է, կաշին իբրև կազմ
իր տեղը զիջում է ծաղկաթղթին ու լաթին, իսկ միջուկի համար տախտակի փոխա-
րեն օգտագործվում է ստվարաթուղթ: Ձեռագրերը գրված են նոտրգրով ու շղագ-
րով, հիմնականում չունեն մեծ հիշատակարաններ, երբեմն կան մանր հիշատա-
կագրություններ և խորագրերում որոշ տեղեկություններ: Ձեռագրերը, քիչ բացա-
ռությամբ, չունեն մանրանկարներ ու զարդարանքներ, եղածները տպագիր և ձե-
ռագիր օրինակներում եղածների անարվեստ կրկնօրինակում են:

Այս ձեռագրերը մի կողմից վկայությունն են հայերեն տպագիր գրքի հետ զու-
գահեռ ստեղծված ձեռագիր մշակույթի կարևորության ու գործածական բնույթի,
մյուս կողմից՝ արտացոլումը այն բազմազան միջավայրի, որում ապրել ու գործել է
հայ մարդը 18–19-րդ դարերում: Քննությամբ պարզ դարձավ, որ ՀՊԹ-ում ձեռա-
գրերի մի մասը 3 անձնական հավաքածուներից են:

Հույս ունենք, որ մեր նախնական քննությամբ կնպաստենք ինչպես ՀՊԹ-ի
ձեռագրերի հետագա գիտական շրջանառությանը, այնպես էլ առհասարակ փոքր
հավաքածուների նկատմամբ ուշադրության մեծացմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հ^մ 352 Կոնդակ – 19-րդ դար, Փուլթկու Ս. Գեորգի վանք (Մոկք), գրիչ՝ Աբրա-
համ վրդ.

Հ^մ 692 Ավետարան – 15-րդ դար, գրիչ-ստացող՝ Մկրտիչ

Հ^մ 693 Բառգիրք – 1850–1854 թթ, Նովրուզլու, գրիչ-ստացող՝ Մելքոն դպիր
Տեր-Մելիքսեթեանց Ագուլեցի

Հ^մ 741 Ժողովածու – 18-րդ դար

Հ^մ 748 Խորհրդատետր – 1850թ., Կարս, գրիչ-ստացող՝ Սիմոն քիյ Աղուա-
նեանց Օձնեցի

Հ^մ 1017 Դասագիրք բժշկարան – 1894թ., Անգալի (Պարսկաստան)

Հ^մ 1140 Երանելի Մարիամ Մարգարիտա Ալագոզեանի վարքը – 19-րդ դար
(1864թ.-ից հետո)

Հ^մ 1141 Անտոն Ռիքարտի, Յաղագս պարտուց և հոգույ եկեղեցականաց –
1864–1865թթ., գրիչ՝ Վարդան Վարդիկեան, ստացող՝ Սերովբե վրդ. Քչուրեան

Հ^մ 1142 Ժողովածու – 18-րդ դար

Հ^մ 1143 Ցանկ նիւթոց Բազմավէպի 30 հատորոց – 1873թ.

Հ^մ 1144 Յովսէփ Արցախեցի, Գիրք տեսական փիլիսոփայութեան – 1839–
1840թթ., գրիչ՝ Յօհաննէս Պիաթուրեանց

Հ^մ 1145 Երգարան – 19-րդ դար

Հ^մ 1146 Ժողովածու – 19-րդ դարի սկիզբ

Հ^մ 1147 Պատմություն քրիստոնեական եկեղեցւոյ. Ա-ԺԸ. դարեր – 1877 թ., գրիչ, ստացող՝ Աշոտ Սառաճեանց

Հ^մ 1148 Երգարան – 19-րդ դար

Հ^մ 1150 Յովհաննէս Փերոնէ, Հարցուպատասխան վարդապետութիւն բողոքականութեան և ուղղափառ եկեղեցւոյ – 1859 թ., Կարին, գրիչ, ստացող՝ Սերովբէ Քչուրեան

Հ^մ 1182 Գիրք հմայութիւնների ու գուշակութիւնների – 18-րդ դար

Հ^մ 1183 Ռամգիրք – 1840 թ., Ախալցխա, գրիչ, ստացող՝ Գէորգ քիյ Գրիգորեան

Հ^մ 1184 Ախտարք – 18-րդ դարի վերջ, ստացող՝ Մկրտիչ

Հ^մ 1187 Ախտարք – 19-րդ դար, ստացող՝ մահտեսի Պաղտասար

Հ^մ 1188 Ախտարք – 19-րդ դար, ստացող՝ մահտեսի Պաղտասար

Հ^մ 1189 Ախտարք – 18-րդ դար

Հ^մ 1190 Ախտարք – 19-րդ դար, ստացող՝ մահտեսի Պաղտասար

Հ^մ 1191 Աղոթարան – 1891 թ.-ից առաջ, գրիչ, ստացող՝ Յովակիմ Ղազարեան

Հ^մ 1192 Ժողովածու – 19-րդ դար, ստացող՝ մահտեսի Պաղտասար

Հ^մ 1193 Երգարան – 19-րդ դար

Հ^մ 1194 Ախտարք – 19-րդ դար, ստացող (հետագայի) մահտեսի Պաղտասար
Պատառիկներ հ^մ 1158-1180 – 17-19-րդ դարեր

Պատառիկ հ^մ 1185 – 18-րդ դար

Պատառիկ հ^մ 1186 Ա-Ը – 17-19-րդ դարեր

ՅԱՎԵԼՎԱԾ 2

	Տպագիր գիրք	Պահպանակ	Կազմաստառ	Ժամանակ	Բովանդակություն	Գիր
1.	Հմր 105	Ա+Բ		Ա՝ 16-րդ դար Բ՝ 17-րդ դար	Ա՝ Ավետարանի հիշատակարան Բ՝ անհասկանալի	բոլորգիր
2.	Հմր 243	Ա+Բ	Ա+Բ	1782 թ.	Մասն Օրինակ գրության ³¹	նոտրգիր
3.	Հմր 266		Ա+Բ	16-րդ դար	Մասն քարոզի	բոլորգիր
4.	Հմր 513	ԱԲ+ԳԴ		14-րդ դար	Մասն Յոհաննու Ոսկեբերանի ի Մաթեոսի ատետարանի մեկնութէնէ	բոլորգիր
5.	Հմր 556	Ա+Բ	Ա+Բ	17-րդ դար	Մասն Տաղարան ³²	բոլորգիր
6.	Հմր 1252	Ա	Բ	16-րդ դար	Մասն Մաշտոցի ³³ , Կանոն աշխարհաթաղի	բոլորգիր
7.	Հմր 1302		Ա	15-րդ դար	Մասն Ավետարանի	

³¹ Թուղթք Մշոյ Սուրբ Կարապետի վանից առաջնորդ Աստուածատուր վարդապետի հարցով գրված Պոլիս, Կարին, Կարս, Թոխաթ և այլն:

³² Թերթերը չեն հաջորդում իրար, կան հետևյալ խորագրով տաղեր «Ոտանաւոր և ողբ Առաքել վարդապետի ասացեալ Վասն անձին իւր և ինձ նման մեղաւորի 2. Ողբ և խրատ նոյն Առաքել վարդապետի ասացեալ», կան նաև սկզբից պակասավոր տաղեր:

³³ Հատված է «Կանոն աշխարհաթաղի»-ից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿՉԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ձեռագիր սկզբնաղբյուրներ

ՀՊԹ տպագիր գրքերում առկա ձեռագիր պատառիկներ – տպագիր հ^մ 105, 243, 266, 513, 556, 1252, 1302

ՀՊԹ-ի հայերեն ձեռագրեր – հ^մ 352, 692, 693, 741, 748, 1017, 1140–1148, 1150, 1182–1184, 1187–1194

ՀՊԹ-ի հայերեն պատառիկներ – հ^մ 1158–1180, 1185, 1186

ՄՄ 3794 – Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր հ^մ 3794

Տպագիր սկզբնաղբյուրներ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ 2003 – Ազաթանգեղոս, Պատմություն հայոց, *Մարենագիրք հայոց*, Անթիլիաս-Լիբանան, 2003, հտ. Բ., 1295–1735:

ՀԱԿՈՒՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 1986 – Հակոբյան թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 1, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1986:

ՀԱԿՈՒՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 1998 – Հակոբյան թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 4, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1998:

ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ԺԱ – Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անունան Մարենադարանի, հ. ԺԱ, խմբագրությամբ՝ Տեր-Վարդանենյան Գ., Գասպարեան Գ., Երևան, 2024:

ՈՍԿԱՆՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 1988 – Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա., *Հայ գիրքը 1512–1800 թվականներին. Հայ հնագրիպ գրքի մարենագիրություն*, Երևան, ՀՍՍՀ Մյասնիկյանի անվ. գրադ., 1988:

Ուսումնասիրություններ

ԱՅՎԱԶԵԱՆ 2005 – Այվազեան Ա., *Նախիջևանի վիմագրական ժառանգությունը. Ազուլիս*, հտ. Բ, Անթիլիաս – Լիբանան, 2005:

ԵԳԱՆՅԱՆ 1965 – Եգանյան Օ., Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մարենադարանի*, խմբ.՝ Խաչիկյան Լ., Մնացականյան Ա., Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատ., 1965, հտ. Ա., 13–214:

ԵԳԱՆՅԱՆ 1984 – Եգանյան Օ., Ցուցակ հայերեն ձեռագրաց ՀՍՍՀ Պետական պատմական թանգարանի, *Բանբեր Մարենադարանի*, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1984, № 14, 251–275:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ 1896 – *Ընդհանուր ցանկ նիւթոց յիւնամեայ Բազմավիպաց Ա-Ծ. 1843–1893*, Վենետիկ, ի տպ. Սրբոյն Ղազարու, 1896: *Ընդհանուր ցանկ նիւթոց յիւնամեայ բազմավիպաց Ա-Ծ.... (20.03.2025–12:00)*:

ՂԱԶԱՐՅԱՆ 2012 – Ղազարյան Դ., 15-րդ դարի ժապավենաձև հնայիկները, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, *Երիտասարդ հայ արվեստաբանների վեցերորդ գիտական նարաշրջան (տոյեմբեր 26–27, 2011)*, Նարաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012, 147–161:

ՂԱԶԱՐՅԱՆ 2013 – Ղազարյան Դ., 16-րդ դարի ժապավենաձև հնայիկները, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, *Երիտասարդ հայ արվեստաբանների յոթերորդ գիտական նարաշրջան (տոյեմբեր 19–21, 2012)*, Նարաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013, 292–309:

ՇԱՀԻՄԱԹՈՒՆԵԱՆՑ 2014 – Շախաթունեանց Յ., *Սրորագրություն կաթողիկէ Էջ-*

միածնի և հինգ գաւառացի Արարարայ, աշխատասիրությամբ՝ Տեր-Ստեփանյան Ա., Մայր Աթոռ սուրբ Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2014: ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ 2014 – ՏԷՐ-Վարդանեան Գ., Զմմատի վանքի ձեռագրական հաւաքածոն և նրա ցուցակի շարունակումը, *Բանբեր Մատենադարանի*, Երևան, «Նաիրի», 2014, № 20, 427–445:

COULIE 2020 – Coulie B., *Armenian Manuscripts. Catalogues, Collections, Libraries, Turnhout*, Brepols, 2020.

Էլեկտրոնային հղումներ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ – Հայաստանի պատմության թանգարանի պաշտոնական կայք. Առաքելություն և Պատմություն, Առաքելություն և պատմություն – HMA (20.03.2025-12:00):

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ 1720՝ – Պաղտասար Դպիր, Գրգուկս շահալէտ, <http://greenstone.flib.sci.am/gsd1/cgi-bin/library.cgi?e=d-01000-00---off-0armenian-armbook%2carmenian%2chajgirqn%2chaygirq%2cNo%5fDate%5fBooks%2cazgayinZz-foreign-01-1---0-10-0---0---0direct-10---4-----0-1l-11-en-50--20-about--00-3-1-00-0-4-0--0-0-11-10-0utfZz-8-00&a=d&c=armenian&cl=CL2&d=HASH04ad7715fabe1990b02487> (20.03.2025-12:00):

Perrone, Giovanni - Biblical Cyclopedia

Tatevik Manukyan

PhD

Matenadaran

tatevm0505@gmail.com

Knar Harutyunyan

Matenadaran

knarbanaser@gmail.com

Elen Davtyan

History Museum of Armenia

davtyanelen2000@gmail.com

THE ARMENIAN MANUSCRIPTS OF THE HISTORY MUSEUM: TRACING ONNIK YEGANYAN'S PUBLICATION³⁴

Keywords: Armenian manuscript, private manuscript collections, History Museum of Armenia, manuscript study, fragments of Armenian manuscripts, colophons, 17th–19th centuries

The Old Books Collection of the History Museum of Armenia preserves 26 complete Armenian manuscripts, 25 fragments, and 1 pastoral letter, totaling 52 manuscript units. Until recently, just three of these manuscripts were known, thanks to an article published in the 1980s by codicologist Onnik Yeganyan.

Through detailed examination, we have identified the circumstances under which these manuscripts were copied, their contents, their history, and the conditions of their arrival at the museum. The manuscripts entered the museum at various times, including around 1921, in 1944, between 1958 and 1959 (likely a typographical error), and in 1972. The

³⁴ The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project № 2IT-6A277.

oldest among them is Gospel No. 692, dating to the 15th century, while the others were created between the 17th and 19th centuries.

In terms of content, the collection includes a Missal, Book of Prayers, Book of Ramel, as well as works on astrology, divination and magic, philosophy, and theology. Among the fragments, there are also sheets and tables from Calendars.

The colophons preserved in some of the manuscripts provide information on their origins. The place of creation is known for 6 manuscripts: Mokq, Kars, Novruzlu village, Anzali (Persia), Karin, and Akhaltsikhe. Additionally, the names of the scribes of 10 manuscripts and the recipients of 14 have been identified.

Analysis of the available data has revealed that some of these manuscripts belong to 3 distinct personal collections. One collection, created in Western Armenia, in Karin, belonged to a clergyman. Another, compiled in Eastern Armenia, in Zangezur, was owned by Baghdasar Margaryan. The third collection, created in Akhaltsikhe, belonged to priest Father Gevorg Grigoryan.

These manuscripts, along with their colophons and notes, provide valuable insight into the use, content, and transmission of late-period Armenian manuscripts.

Татевик Манукян

канд.фил.н.

Матенадаран

tatevm0505@gmail.com

Кнар Арутюнян

Матенадаран

knarbanaser@gmail.com

Элен Давтян

Музей Истории Армении

davtyanelen2000@gmail.com

АРМЯНСКИЕ РУКОПИСИ МУЗЕЯ ИСТОРИИ: ПО СЛЕДАМ ОДНОЙ ПУБЛИКАЦИИ ОННИКА ЕГАНЯНА³⁵

Ключевые слова: Армянская рукопись, частные собрания рукописей, Музей истории Армении, рукописоведение, фрагменты армянских рукописей, колофоны, 17–19 века

В коллекции старопечатных книг Музея истории Армении хранятся 26 полных армянских рукописей, 25 фрагментов и 1 кондак, всего 52 рукописная единица. До недавнего времени были известны лишь три из этих рукописей, благодаря статье, опубликованной в 1980-х годах кодикологом Онником Еганяном.

В ходе изучения были выявлены условия создания этих рукописей, их содержание, история и обстоятельства поступления в музей. Рукописи попали в музей в разное время: около 1921 года, в 1944 году, в период 1958–1959 годов и в 1972 году. Самая древняя из них — Евангелие № 692, датируемое XV веком, в то время как остальные были созданы в 17–19 веках.

По своему содержанию коллекция включает Служебник, Молитвенник, а также труды по астрологии, гаданиям, философии и теологии. Среди фрагментов также имеются листы и таблицы из календарей.

³⁵ Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта № 21Т-6А277.

Сохраненные в некоторых рукописях колофоны позволяют определить места их создания. Известно, что 6 рукописей были переписаны в Моксе, Карсе, деревне Новрузлу, Анзали (Персия), Карине и Ахалцихе. Также имеются имена писцов 10 рукописей и получателей 14.

Анализ имеющихся данных позволил выявить три отдельных личных собрания. Одно из них было создано в Западной Армении, в Карине, и принадлежало священнослужителю. Другое было собрано в Восточной Армении, в Зангезуре, и принадлежало Багдасару Маргаряну. Третье было собрано в Ахалцихе и принадлежало отцу Геворгу Григоряну.

Эти рукописи, вместе с их колофонами и заметками, представляют собой важный источник информации об использовании, содержании и передаче поздних армянских рукописей.